թեամբ են վերաբերում ուխտագնացութեան վրայ։ Ուտիացոց երկրի ուխտագնացութիւնը լինում է այսպէս։ Առաւօտեան արշալոյսը բացուելուն պէս, ամենքը, արք և կանայք, ծերերն ու երեխաները լուացուում, մաքրուում, սանրուում և տօնական նոր շորեր են հագնում։ Առողջները՝ ոտքով, թոյլերն ու փոքր երեխաները գոմէշի սայլերով, իսկ գիւղացի կարիճ երիտասարդները նժոյգ ձի նստած, ուրախ-ուրախ երգելով և զբրուցելով, շարան-շարան, մեծ երկիւղածութեամբ և ջերմ հաւատով դիմում են դէպի ուխտատեղ։ Հարուստները տանում են իրենց հետ ժատաղացու մի-մի շիշակ գառ, իսկ աղքատները աքաղաղ. Հարկաւ, խունկ ու մոմի հետ վերցնում են իրենց հետ նաև ուտելիքի և խմելիքի ամեն տեսակ առատ պաշար—տապակած ու խաշած հաւ, կարմիր ներկած ձու, գաթայ, հալվայ, գինի, օղի և այլն և այլն։ Ս. պատարագից յետոյ, ժողովուրդը խիստ երկիւղածութեամբ և խորին պատկառանքով համբուրում է եկեղեցու ժասունքները և կամ սրբավայրերի անշուք խաչքարերը, որից յետոյ կարծէք նա թէ նոր հոգի և նոր կեանք է ոտանում։ Ապա իւրաքանչիւր գիւղի համայնք, շար ի շար, իրար կողքէ-կողք նստում են ծալապատիկ միմեանց դիմաց, կանաչ արօտների վրայ, նորաբողբոջ ծառերի ստուերների տակ։ Մէջտեղից բացւում են երկար ու նեղ գունաւոր սփռոցները, որոնց վրայ դարսում են իրենց ուտելիքի ու խմելիքի պաշարները, քահ. կանգնում է ոտքի վրայ և «Հայր մեր»-ով օրհնում է սեղանը։ Այս-